



Հանրային ծախսերի
և ԼՂՀ ֆինանսների
նախարար Ս. Գևորգյան
« 23 » սեպտեմբերի 2016թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 23 » սեպտեմբերի 2016թ.

N 249/ԼԲ

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՔՐԱԹԻՎ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐՈՎ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում փոքրաթիվ սովորողներով բազմահամակազմ դասարաններ չձևավորվելու դեպքում մեկ սովորողի ընդգրկմամբ, կամ երկու սովորողի ընդգրկմամբ առանձին և երկհամակազմ դասարանները կազմավորել 0,5 դասարանով՝ հատկացնելով ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի, իսկ երկհամակազմ դասարանի դեպքում՝ առավել շատ ժամաքանակ ունեցող դասարանի ուսումնական ծանրաբեռնվածության կեսի չափով շաբաթական ժամաքանակ:
2. ԼՂՀ շրջանների վարչակազմերի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների վարիչներին, հանրակրթական դպրոցների տնօրեններին. սույն հրամանի առաջին կետով սահմանված դասարանների կազմավորումն իրականացնել 2016 թվականի հոկտեմբերի 1-ից:
3. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավարին. սույն հրամանը ներկայացնել ԼՂՀ շրջանների վարչակազմերի ղեկավարներին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:
5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ս. ԱՍՐՅԱՆ